

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԲԱՌԱԴԱՇԱՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հայտնի է, որ ընթերցանության կարողությունների զարգացումը պահանջում է որոշակի քանակի բառերի իմացություն, առանց որի հնարավոր չէ պատշաճ մակարդակով ըմբռնել տեքստերի բովանդակությունը:

Բառապաշարը լեզվի հիմնական կողմերից մեկն է և սերտորեն կապված է քերականության ուսուցման հետ: Քերականական կառուցվածքները դրսևորվում են բառերի միջոցով:

Հայտնի է, որ ուսումնական բառարանները բառարանագրության առանձին ճյուղ են կազմում: Ինչպես նշում են Վ. Մորկովկինը և Վ. Մորոզենկոն, մանկավարժական ուսումնական բառարանագրությունը «լեզվամեթոդական կոմպլեքսային առարկա է, որի բովանդակությունը ուսումնական նպատակով ընտրված նվազագույն բառապաշարի տեսական և գործնական նկարագրությունն է» (Վ. Մորկովկին 1978թ.: Մեջբերումը՝ ըստ Վ. Մորոզենկոյի, 1987թ., էջ 37): Յուրաքանչյուր լեզվի բառապաշարն ընդգրկում է հետևյալ հիմնական բառաշերտերը.

ա) Համագիտական բառաշերտ. սրանք այն բառերն են, որոնց օգնությամբ կարելի է անվանել, նկարագրել և բնութագրել տարբեր գիտություններում հանդիպող ընդհանուր երևույթները, հասկացությունները, գործողությունները: Այդ բառաշերտը կազմում է գիտական ոճի հիմքը (Օ. Ախմանովա, Մ. Գլուշկո, 1974թ., էջ 78):

բ) Նեղ մասնագիտական բառաշերտ. սա բնորոշ է գիտության տվյալ մաս-նաճյուղին (օրինակ՝ տնտեսագիտություն, մաթեմատիկա, ֆիզիկա և այլն):

գ) Չեզոք բառաշերտ. սրանք այն բառերն են, որոնք բնորոշ են լեզվի բոլոր շերտերին, չունեն գործածության նեղ շրջանակ, ուստի կարելի է հանդիպել գրեթե բոլոր ոճերում: Այստեղ կարելի է առանձնացնել նաև առավել գործածա-

կան համընդհանուր բառաշերտը, որը կազմում է տվյալ լեզվի բառապաշարի միջուկը և լայնորեն գործածվում է տարբեր ոճերի տեքստերում :

Նշված բառաշերտերում բառապաշարի կազմը կայուն չէ, այն մշտապես ենթարկվում է փոփոխությունների, որոնք պայմանավորված են հասարակության զարգացման գործոնով: Այդ առումով մասնագիտական տեքստեր ընթերցելիս նորաբանությունների հետ կապված որոշակի խոչընդոտներ են ծագում, հատկապես շատ են անգլերենից գերմաներեն ներխուժող բառերը (ի տարբերություն հայերենի, որտեղ միջազգային բառերի տոկոսը բավականին ցածր է):

Անտեսել այդ նորաբանությունները նշանակում է հետ մնալ լեզվի զարգացման ժամանակակից միտումներից և սովորողներին զրկել անհրաժեշտ տեղեկատվությունը ճիշտ ընկալելու հնարավորությունից:

Այդ պատճառով էլ խիստ կարևոր է հայտնաբերել ժամանակակից գերմաներենին բնորոշ նորաբանությունները, ուսումնասիրել, տեսակավորել և իմաստավորել դրանք:

Այդ հարցը լուսաբանելիս կարելի է օգտագործել Ե.Վ. Ռոզենի «Գերմաներենի բառապաշարն այսօր» մենագրությունը (Ե. Վ. Ռոզեն, 1976թ.): Թեև այս «այսօրը» վերաբերում է 1976 թվականին, այսինքն՝ մինչև գերմանական երկու պետությունների միավորումը, այդուհանդերձ, մենագրությունում շարադրված հիմնական դրույթներն ու օրինակները չեն կորցրել իրենց արդիականությունը:

Քաղաքական, սոցիալական, տնտեսագիտական փոփոխությունների հետևանքով ի հայտ եկած նոր երևույթներն ու հասկացություններն անվանելու կարիք է զգացվում: Լեզվում հայտնվում են նոր բառեր՝ նորաբանություններ, կամ արդեն առկա բառերը հարմարեցվում են նոր իմաստներին: Այդ պատճառով էլ նորաբանությունների իմաստավորումը, բառապաշարային փոփոխությունների գրանցումը խիստ անհրաժեշտ են ուսումնառության համար (օրինակ՝ *der Atommeller, die E-mail*) և այլն:

Ինչպես նշում է Ե.Վ. Ռոզենը, նոր բառերի կարիքը հաճախ զգացվում է մշակույթում ի հայտ եկող նոր առարկաները, երևույթներն ու հասկացություններն անվանելու համար: Նոր իրի, գործունեության, նոր որակի, նոր

հասկացության, արտադրանքի նոր տեսակի և այլնի առաջացումը սովորաբար ուղեկցվում է նոր անվանումով:

Պետք է համաձայնվել Ե.Վ. Ռոզենի հետ այն հարցում, որ գիտատեխնիկական հեղափոխության շրջանում, իսկ մենք դրա վկան ու մասնակիցն ենք, նյութական մշակույթին առնչվող նոր անվանումների թիվը դառնում է անսահման: Թռչում են «գերծայնային ինքնաթիռները» (Überschallflugzeuge), տրանսպորտի շարժմանը հսկում են հեռակարգավորիչները (Monitor), գործարաններում կան ծրագրային դեկավարմամբ աշխատող հաստոցներ (numerisch gesteuerte Werkzeugmaschinen), գյուղացիները կառուցում են թռչնակոմբինատներ (Geflügelkombinate), տները ջեռուցվում են մարտկոցային նոր համակարգով (niedertemperierte Großflächenbeheizung), տները կառուցվում են պատրաստի դետալներից (vorgefertige Bauelemente) և այլն: Ուրեմն, նյութական արտադրության ցանկացած ոլորտում կան փոփոխություններ և դրա հետևանքով նոր բառեր ու նշանակություններ են հայտնվում (Ե.Վ. Ռոզեն, նույն տեղում):

Ժամանակակից գերմաներենի նյութական մշակույթի ոլորտի նորաբանություններին համապատասխանում են այլ լեզուների նման նորաբանություններ: Օրինակ Klimaanlage - օդորակիչ - կոնդիցիոներ, Funkakademie - ռադիոհամալսարան, Ergonomie - էրգոնոմիկա (աշխատանքային գործընթացներն ուսումնասիրող ճյուղ, որի նպատակն է բարելավել աշխատանքային պայմանները), Parkhochhaus - բազմահարկ ավտոտնակ, Pressezentrum - մամուլի կենտրոն և այլն: Հաճախ դա ծանոթ միջազգային բառապաշար է՝ Kybernetik - կիբեռնետիկա, Elektronik - էլեկտրոնիկա, Computer - համակարգիչ, Ökologie - էկոլոգիա (գիտություն շրջակա միջավայրի մասին), Infrastruktur - ինֆրաստրուկտուրա (տնտեսության, քաղաքականության մեջ կազմակերպման կառուցվածքային ձև, որը ենթակա է ուրիշին՝ վերադասին, և ապահովում է նրա նորմալ գործունեությունը), Bathyskaph - բատիսկաֆ (խորջրյա ինքնաշարժ սարքավորումներով հագեցած խցիկ, որով ուսումնասիրում են ջրի հատակը), Airbus - անբորուս (բազմատեղ մարդատար ինքնաթիռ): Այս ցուցակը կարելի է շարունակել, քանի որ ժամանակակից կյանքում չկան նյութական մշակույթի ոլորտներ, որտեղ չթափանցեն միջազգային արծազանք ունեցող գիտատեխնիկական փոփոխությունները (Ե. Վ. Ռոզեն, էջ 24):

Ժամանակակից նորաբանությունները, ըստ Ե.Վ. Ռոզենի՝ արտացոլում են նաև աշխարհում տեղի ունեցող քաղաքական փոփոխությունները: Աֆրիկայի քաղաքական քարտեզի փոփոխությունները խթանեցին նոր պետությունների անվանումների (հատուկ անուն) և դրանցից կազմված ածականների առաջացումը՝ Malawi - malawisch, Maledinen - maledivisch, Nigeria - nigrisch և այլն:

Դժվար չէ նկատել, որ գերմաներենում նորաբանությունների մեծ մասը կազմված է միջազգային բառապաշարից՝ փոխառություններից և նմանակումներից:

Ըստ հեղինակի՝ նույն կարգի «բառ-վկաներ» են նաև նորածն հագուստի պարագաների անվանումները, որոնցով հետագայում կհետաքրքրվի հագուստի պատմությունը: Այժմ այդ բառերն առօրեական են: Այս բնույթի նորաբանություններն աչքի են ընկնում արտասահմանի նկատմամբ հակումով, որը միշտ նկատվում է նորածնության բնագավառում: Օրինակ՝ Jeans - ջինս, Blouson (Bluse, die über dem Rock getragen wird und an den Hüften eng anliegt), Dufflecoat (dreiviertellanger, sportlicher Herrenmantel), Blazer անգլերեն (Klubjacke mit Ärmelabzeichen), Cardigan - (sportliche, geknöpfte Strickweste) և այլն (նույն տեղում, էջ 25):

Պետք է համաձայնվել Ե.Վ. Ռոզենի հետ նաև այն հարցում, որ ժամանակակից տնտեսության մեջ կարևոր տեղ ունի սպասարկման ոլորտը: Այստեղ նույնպես հայտնվել են բնակչության հատկապես կենցաղային սպասարկման նոր ծևերի հետ կապված շատ նորաբանություններ: ԳՂԴ-ում կազմված ցանկերում, օրինակ, նշված են այսպիսի անվանումներ՝ Spatverkaufsstelle, Vorauswahlverkaufsstelle, Minuteneinkauf, Selbstbedienung, Cafeteria:

Նեղ մասնագիտացումը բնորոշ է ոչ միայն արդյունաբերական ձեռնարկատիրությանը, այլ նաև գործունեության այլ ոլորտներին, որտեղ նույնպես մասնագիտությունների նոր անվանումներ են հայտնվում: Ավանդական Sekretärin անվանումը ծջգրտվում է Chefsekretärin, Stenosekretärin, Stenokontoristin նորաբանություններով: Հատուկ անվանում են ստացել նաև հաշվապահական մասնագիտացումները. Mahnbuchhalter, Bilanzbuchhalter, Debitorenbuchhalter, Maschinenbuchhalter, Maschinenschreiberin, մասնագիտության անվանումը փոխարինվում է Stenotypistin, Phonotypistin և նույնիսկ Datentypistin բառերով, որոնք մասնագիտացման ավելի բարձր աստիճան են ցույց տալիս:

Ժամանակակից մասնագիտություններ մատնանշող բառերի թվարկումն կարելի է ավարտել «ամենաժամանակակիցներով», որոնք առնչվում են էլեկտրոնային հաշվողական տեխնիկայի բնագավառին: Դրանք են՝ Maschinensaalleiter, Programmierer, Kodierer/in, Tabellierer/in, Sortierer/in, Prüfer/in, L.ocher/in (նույն տեղում, էջ 26-27):

Ե.Վ. Ռոզենն իր աշխատությունում ընդգծում է մեկ փաստ ևս. -in ածանցով կազմված ածանցյալ բառերն իզական սեռ են մատնանշում Maschinenführerin, Kranführerin, Einzieherin, Ingenieurin, Architektin, Kartographin, Ministerin, Kraftwerkerin, Prüferin, Pferdepflegerin և այլ բառերում: Սրանք ժամանակակից արդյունաբերության մեջ կնոջ դերի բարձրացման լեզվական վկաներն են:

3. Շվիտլան (1999թ., էջ19) իր հոդվածում իրավացիորեն նշում է, որ որոշ բառեր առանձնապես տարբերություններ չեն դրսևորում Արևելյան և Արևմտյան Գերմանիայում, և բերում է բազմաթիվ օրինակներ՝ planen, Macht, Bilanz, rationalisieren, sanieren, Fonds, Pluralismus և այլն: Դրա հետ մեկտեղ հեղինակը մատնանշում է նույն իմաստն արտահայտող զուգահեռ բառերի գործածությունը, որոնք համդես են գալիս որպես հոմանիշներ: Օրինակ՝ Արևելյան Գերմանիայում օգտագործվում է

Broiler	Bratthändler-ի փոխարեն
Lehrling	Auszubildender-ի փոխարեն
Zielstellung	Zielsetzung-ի փոխարեն
Kaufhalle	Kaufhaus-ի փոխարեն
vorfristig	vorzeitig-ի փոխարեն
Altstoffhandel	Recyclingbetrieb-ի փոխարեն

(նույն տեղում, էջ 21):

Մասնագիտության հին անվանումը նորով փոխարինելը Ե.Վ. Ռոզենի կարծիքով հաճախ բառի սոցիալական դրսևորման, նրա արդիականության մատնանշման արդյունքն է: Ցածր վարձատրվող, որակավորում չպահանջող և ծանր ֆիզիկական աշխատանքի հետ կապված որոշ մասնագիտություններ փոխել են իրենց բնույթը ժամանակակից տեխնիկական առաջընթացի շնորհիվ: Նոր անվանումներն արտացոլում են այդ առաջընթացը և տվյալ աշխատանքը ներկայացնում որպես որակավորում պահանջող և անհրաժեշտ: Այսօր ավելի

կիրառական են Raumpflegerin, Hausangestellte, Hausassistentin բառերը, քան նախորդները՝ Putzfrau, Reinmachefrau, Dienstmädchen: Bürobote բառը գերադասելի է Laufrunge-ից (Ե.Վ. Ռոզեն, 1976, էջ 28):

Հեղինակության ձգտումով կարելի է բացատրել գերմաներեն անվանումները օտար բառերով փոխարինելու հակումը: Այդպիսիք են, օրինակ՝ Layouter (Graphiker für Text-und Buchgestaltung), Designer (Formgestalter), Drossman (Herrenschneider), Florist (Blumenbinder) անվանումները: Դիտարկելով և ուսումնասիրելով նորամուծությունները կարելի է սահմանել գնահատականների փոփոխությունները հասարակական վարկանիշային սանդղակում, այսինքն՝ հասարակական հոգեբանության ոլորտում (նույն տեղում, էջ 29): Դժվար է թերագնահատել, հեղինակի կարծիքով, զանգվածային լրատվամիջոցների գրավոր (թերթ-ամսագրային) և բանավոր (ռադիո-հեռուստատեսային) տեսքերի ազդեցությունը խոսքի ձևական կողմի քարոզչության և բնակչության բոլոր խավերի բառապաշարի «համահարթեցման» գործում՝ անկախ կրթությունից, մասնագիտական գործունեությունից կամ բնակավայրից:

Նորաբանությունները լեզու ներթափանցելու հնարավորության համար պարտական են մամուլին, որն ընթերցողին ներկայացնում է բառի գրավոր տեսքը, նրա ուղղագրությունը: Ռադիոն և հեռուստատեսությունը տալիս են բառի հնչյունային պատկերը, որը շատ կարևոր է, մասնավոր, եթե նորաբանությունը փոխառված է լատինատառ որևէ լեզվից:

Զանգվածային լրատվամիջոցները նույնպես մեծ ազդեցություն ունեն բառապաշարի փոփոխության և զարգացման վրա:

Կարելի է համաձայնվել Ե.Վ. Ռոզենի հետ այն հարցում, որ լեզվի վրա հեռուստատեսության ներգործության ուժգնությունը կախված է հիմնականում երեք գործոններից. 1) ներգործման կանոնավորությունն ու տևականությունը 2) հաղորդավարների և դերասանների գրական խոսքի բարձր սոցիալական վարկանիշը, որը հեռուստադիտողի համար «որակյալ լեզվի» չափանիշ է, և վերջապես՝ 3) հեռուստատեսությունը միասնական լսարանում է միավորում քաղաքների և հեռավոր գյուղական շրջանների ունկնդիրներին՝ տալով նրանց միօրինակ լեզվական տեղեկատվություն:

Արա հետևանքով տեղի է ունենում տարբեր լեզվակիրների բառապաշարի «համահարթեցում», իսկ աղքատիկ բառապաշար ունեցողների համար (կրթական ցածր մակարդակ ունեցող) բառապաշարի հարստացում: Բոլոր սոցիալական շրջանները հեռուստատեսության միջոցով (և ոչ միայն) նոր տեղեկություններ են ստանում մայրենի լեզվի, հայտնի նորաբանությունների, բառերի նոր նշանակությունների կամ իմաստային նոր նրբերանգների, նաև լեզվական փոխառությունների, բառերի օգտագործման նոր հնարավորությունների մասին:

Գերմաներենի բառակազմության մեջ գործում են համապարփակ բնույթի երկու տարբեր ուղղություններ: Մի կողմից «թափանցիկ», ակնհայտ բառաբարդում, այսինքն՝ ակնհայտ ներքին պատճառաբանվածություն (մոտիվացիա) ունեցող բառեր, մյուս կողմից՝ բառակազմը կրճատելու հակում: Այն զուգակցվում է պարզ և հստակ բազմիմաստ բառերի ստեղծման և կիրառման հետ, օրինակ՝ (Fernseh)apparat, (Fernseh)gerät, (Fernseh)leuchte: Այդ բառերը կազմությամբ իրոք ակնհայտ և տեսանելի են, իմաստով՝ ըմբռնելի, բայց խոսքում համեմատաբար հազվադեպ են հանդիպում, քանի որ երկար են և բառակազմության համար ոչ պիտանի: Օրինակ՝ Fernsehbildschirm բառն ունի չորս հիմք, 17 տառ, իսկ Fernsehbildschirmvervollkommenung-ը՝ 7 հիմք, 32 տառ (նույն տեղում, էջ 33):

Ե.Վ. Ռոզենը իրավացիորեն նշում է նաև, որ բառերի մենիմաստության ձգտումը, որի արդյունքում առաջանում են Fernsehbildschirm կարգի բառեր, ինչպես և ընդհանրապես տերմինակազմությունը, իմաստային առումով պատճառաբանված են: Սակայն բառաբարդման հետևանքով ստեղծվում են «բառ-իրեշներ» (Bandwurmwörter), որոնք թեև չեն մերժվում լեզվակիրների կողմից, սակայն քննադատության ու հեզմանքի են արժանանում: Այդ պատճառով, երկար ու գերերկար բառերի մի մասը (տվյալ դեպքում Fernseh/en) կրճատվում է խոսքային իրադրության կամ համատեքստի ազդեցությամբ. Fernsehgerät → Gerät, Fernsehsendeturm → Fernsehturm → Sendeturm: Այստեղ արդեն գործում է մյուս մոտեցումը՝ ձգտումը խոսքի հակիրճության:

Որքան կարճ է նման բառը, այնքան, ըստ հեղինակի, ավելի քիչ է կապված խոսքի գրավոր և պաշտոնական ոճերի հետ: Օրինակ՝ Schirm բառը

հազվադեպ է հանդիպում համապատասխան տեխնիկական փաստաթղթերում, իսկ Fernsehbildschirm-ը, ընդհակառակը, բանավոր առօրեական խոսքում (Ե.Վ. Ռոզեն, 1976, էջ 34):

Երկար բառերի կրճատումը և հաղորդակցման ընթացքում պարզ ու հարմար անվանումների ստեղծումը, ինչպես նշում է հեղինակը, հաճախ արվում է գիտակցաբար, բայց տարերայնորեն: Կրճատման «արդյունքները» միշտ չէ, որ հաջող են լինում: Այսպես մեր օրինակում բառի ծևական կառուցվածքի պարզեցումը վերջին հաշվով հանգեցրեց համանունության: Schirm բառը (տեքստից դուրս) կարող է հասկացվել որպես 1.Regenschirm, 2.Lampenschirm, 3.Mützenschirm, 4.Schirmdach, 5.Fernschschirm և այլն, համապատասխանաբար Röhre - 1.Backröhre, 2.Wärmerröhre, 3.Gang im Tierbau, 4.Fernsehröhre և այլն: Fernsehgerät և Fernsenteilnehmung բառերի կառուցվածքային տարբերակների պարզեցումը (Apparat,-Empfänger) և (Zuschauer) առաջացնում է der Fernseher բառի համանունություն, որը նշանակում է և՛ հեռուստացույց, և՛ հեռուստադիտող (Ե.Վ. Ռոզեն, 1976, էջ 34):

Գործածական են կատակային անվանումները der Strassenfeger- «հաղորդում, որը գրավում է այնքան հեռուստադիտող, որ փողոցները դատարկվում են», der Kettenseher - «անընդմեջ բոլոր հաղորդումները դիտող մարդ» (նույն տեղում, էջ 37): Այսպիսով շուրջ քսան տարվա ընթացքում ժամանակակից գերմաներենը հարստացել է թեմայով և իմաստով «հեռուստատեսության» հետ կապված տասնյակ նոր բառերով:

Բառի ուղղակի (անվանական) կամ հիմնական իմաստի ընկալումը հիմք է դառնում բառիմաստի այլ դրսևորումները հասկանալու համար: Բառապաշարի ուսուցման ժամանակ կարևոր է բառի ճիշտ գործածությունը՝ այս կամ այն բովանդակությունն արտահայտելու կամ տվյալ համատեքստում ճանաչելու և հասկանալու նպատակով:

Երկլեզվության պայմաններում պետք է հաշվի առնել նաև բառի յուրահատուկ կապը մայրենի կամ ռուսերեն բառերի հետ, ինչպես նաև նրանց բազմիմաստությունը: Բազմիմաստ բառերի տարբեր նշանակությունները տարբեր լեզուներում հաճախ չեն համընկնում, որն էլ կարող է միջլեզվական փոխներթափանցում առաջացնել:

Ամփոփելով ժամանակակից գերմաներենի ուսումնական ծրագրային բառապաշարի վերլուծության միջոցով կարելի է տարբերակել մի կողմից արմատական, ածանցավոր և բարդ կազմություն ունեցող տերմիններ, մյուս կողմից կայուն բառակապակցություններ (նաև տերմինակապակցություններ), դարձվածաբանական միավորներ:

Այսպիսով, բառապաշարային միավորը՝ որպես մեթոդական կամ դիդակտիկական միավոր, ընդգրկում է.

բառեր (պարզ, բարդ, ածանցավոր), բառակապակցություններ, տերմիններ (բառակազմական տարբեր կաղապարներով), տերմինակապակցություններ, կայուն կապակցություններ, դարձվածաբանական միավորներ:

Մեթոդական տեսակետից վերոհիշյալ տարբեր միավորները պետք է յուրացվեն որպես մեկ ամբողջություն՝ հաշվի առնելով դրանց իմաստը, կառուցվածքը, գործածությունը:

Բառապաշարային միավորների ճշգրտումը թույլ է տալիս ձևակերպել մեթոդական առումով դյուրընկալելի բառապաշարի դասակարգումը:

1. Իրական (ռեալ) բառապաշարն այն նվազագույն բառապաշարն է, որը ներառում է ուսումնական գործընթացում սովորողների կողմից յուրացվող ինչպես պրոդուկտիվ, այնպես էլ ռեցեպտիվ բառապաշարները:

2. Ներգոր (պոտենցիալ) բառապաշարն ընդգրկում է.

ա) միջազգային բառերը, որոնք մայրենի լեզվում ունեն ուղղագրական և արտասանական ընդհանրություններ.

բ) բարդ և ածանցավոր բառերի այն շերտը, որը չի մտնում նվազագույն բառապաշարի մեջ, սակայն հասկանալի կամ դյուրըմբռնելի է՝ սովորողներին ծանոթ տարրերի և բառարմատների, ինչպես նաև ծանոթ բառակազմական կաղապարների շնորհիվ.

գ) բազմիմաստ բառերի այլ նշանակությունները, որոնց ընդհանրությունը բացահայտվում է բառի գլխավոր իմաստի հիման վրա:

Բառապաշարի հարստացումը մեծ մասամբ կատարվում է ի հաշիվ բառակազմության փոփոխությունների, որի տեսակարար կշիռը շատ բարձր է գերմաներենում:

Ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը, «բառակազմության կենտրոնական հասկացությունը բառն է, ուսումնասիրության հիմնական առարկան բաղադրյալ բառը. ... ինչպես ամեն մի կաղապարի, այնպես էլ բաղադրյալ բառի կաղապարի մեջ տարբերվում են միջուկային և առմիջուկային բաղադրիչներ, ընդ որում՝ բաղադրության տեսակները որոշվում են առմիջուկային բաղադրիչների միջոցով» (Գ. Բ. Ջահուկյան, 1989թ., էջ 158):

Ըստ որոշ հաշվարկների՝ իրական բառապաշարային մի քանի տասնյակ միավորների հիման վրա կարող են ստեղծվել ներգոր բառաշերտի շուրջ 2500-3000 լրացուցիչ բառեր, որոնք արդեն հեշտությամբ կարող են ընկալվել:

Շարադրվածից պարզ է դառնում ընտրության այն սկզբունքների իրագործման կարևորությունը, որոնք մի կողմից՝ ապահովում են իրական բառապաշարի առավել գործածական միավորների և նորաբանությունների ընդգրկումը նվազագույն բառապաշարի մեջ, մյուս կողմից՝ ներգոր բառապաշարի՝ գերմաներենի համար առավել տիպական բարդ և ածանցավոր բառերը, որոնք կազմված են ծանոթ բառակազմական կաղապարների միջոցով:

Օգտագործված գրականության ցանկ

- Աստվածատրյան Ս. Գ. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Ե., 1985:*
Аствацатрян М.Г. Использование статистических характеристик деривационных моделей при отборе словообразовательного минимума для языкового вуза.
Сб. Методика обучения иностранным языкам. Минский гос. пед. институт ин. яз., вып. 4, Минск, 1974.
Кубрякова Е.С. Номинативный аспект речевой деятельности, М., 1986.
Морозенко В.В. Типы учебных словарей по английскому языку для вузов неязыковых специальностей. Сб. Иностранные языки в высшей школе. Вып. 20. М., 1987.
Розен Е.В. Сложные слова в немецкой прессе. "Иностранные языки в школе", 1967, N3.
Розен Е.В. Лексика немецкого языка сегодня, М., 1976.